

Quercus laevis

gymnocarpa

Swamp white oak

633.1

U-26

1931

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գարնան ցորենը և նրա նշանակությունը	3
Ցանքաաշրջանի նշանակությունը	7
Գարնանացան ցորենի կլիմայական և հողային պայմանները ա. Ինչպես է բնում գարնան ցորենը	8 9
բ. Յողունի առջանալը, ծաղկումը և հասնելը	10
Սուպան և հանգստացած հողերի նշանակությունը	11
Բազմամյա խոտերի նշանակությունը գարնանացան ցորենի համար	12
Հողի մշակությունը	13
Ցանքսի ժամանակը	14
Ինչ խորություն վրա պետք է ցանել	16
Ցանելու յեղանակները	17
Ցանքսի խտությունը	18
Սերմերի սելեկցիոն տեսակների նշանակությունը	19
Գարնանացան ցորենի տեսակները	22

1. ԳԱՐՆԱՆ ՑՈՐԵՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ցորենները՝ ըստ իրենց ցանքսի ժամանակի, մեզնում յերկու խմբերի յեն բաժանվում : Առաջին խմբին պատկանում են այն ցորենները, վորոնք ցանվում են աշնանը՝ սեպտեմբերից մինչև նոյեմբերի վերջերը, դրանք կոչվում են աշնանացան ցորեններ : Յերկրորդ խմբին պատկանում են գարնանը ցանվող կամ գարնանացան ցորենները :

Հայաստանում ցանվող ցորենների մեծ մասը գարնանացան է — մոտ 69 — 70 %-ը, իսկ փոքր մասը 39 — 40 %-ը աշնանացան են :

Գարնանացան ցորենների այդքան մեծ տարածությունը Հայաստանում բացատրվում նրանով, վոր Հայաստանի մեծագույն մասը՝ նրա մոտ 80 %-ը գտնվում է լեռների հարթավայրերում, դրանց կրճքին, ձորերում, մեծ բլուրների վրա — վորոնք բոլորն էլ բնականից բարձր դիրք ունեն և դրա պատճառով էլ այդ տեղերի կլիմայական պայմանները թույլ չեն տալիս ցանելու աշնան ցորեն, վորովհետև աշնան ցորենը մեծանալու և հասնելու համար պահանջում է ավելի շատ տաքություն, քան դա կա մեր լեռնային շրջաններում :

Այսպես, ահա, այն ժամանակ, յերբ աշնանը ցանած ցորենը հասնում է հաջորդ տարին հունիսին, գարնանացան ցորենը ցանում են ապրիլի վերջին, մայիսին և չորս ամսից հետո — այն է ուստոսի 15 — 30-ը նա արդեն հասնում է, վորով դուրս է դալիս, վոր, մինչդեռ աշնան ցորենի համար անհրաժեշտ է 150 — 160 տաք որ, գարնան ցորենը հասնելու համար պետք ունի միայն 100 — 110 որի : Ահա ցորենի հասնելու համար պահանջվող այդ քառասուն — հիսուն որերի պակասը ստիպել է մարդկանց գտնել ցորենի այնպիսի տեսակներ, վորոնք կարողանան կարճ ժամանակում հասնել ու

բերք տալ: Յեվ հնարել, մշակել են ցորենների զարնանացան-
վաղահաս տեսակները:

Յեվ այսպես, Հայաստանում մենք ունենք զարնանացան ցորենների հետևյալ շրջանները՝ Լենինականի, Նոր-Բայազետի, Ախտալի, Յելենովկայի, Աբարանի, Մարտունու, Տաթևի — ուր դրեթե բացասապես զարնանացան ցորեններ են ցանվում, իսկ մյուս շրջաններից շատերում — սրանց լեռնային, բարձրադիր տեղերում են զարնան ցորենը և զարնան զարին ստաջնակարգ տեղ են բուծում բոլոր տեսակ բույսերի մեջ:

Միայն տաք զաչառվայրումն է — վաղարշապատի, Հրազդանի, Ղաթարլուեի, Ղուրգուզուլիի շրջաններում, ուր զարնանացան վոչ ցորեն կա և վոչ էլ գարի, տաք և ցածրադիր այդ տեղերում, բացի յեղիպտացորենից, ցանվում են բացառապես աչնան տեսակները:

ԻՆՉՈՒՒ ՅԵ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆՆԻ ԲԵՐՔԸ ԲԻՉ

Թե Ռուսաստանում և թե մեզում՝ Անդրկովկասում և Հայաստանում նկատված է, վոր գյուղական հողարածիներում զարնանացան ցորենը ավելի քիչ բերք է տալիս, քան աչնանացանները:

1926 թվին Հայաստանում սրտֆ. Չելենցի եքսպեդիցիայի կատարած հետազոտությունները պարզեցին, վոր մեր զարնանացան ցորենների բերքը միջին հաշվով մի հեկտարից ստացվում է 4 — 6 ցենտներ (24 — 36 փութ), այն ինչ աչնան ցորենների բերքը դր կրկնակին էր 8 — 12 և ավելի ցենտներ:

Ինչով պետք է բացատրել այդ յերևույթը, և ի՞նչպես անենք, վորպեսզի զարնանացան ցորեններից մենք ստանանք շատ ավելի բարձր և կայուն բերք, քան ստացվում է ներկայումս:

Գարնանացան ցորենի ցածր բերքի պատճառները շատ են. բնենք-գրանցից գլխավորները:

ա. Հողերի հոգևածությունը: Հողերի հոգևածություն տալով պետք է հասկանանք, յերբ արտերի վրա միմիանց յետևից, տարեց-տարի նույն բույսը ցանելով-նրանք տարեց-տարի յել պահասեցնում են իրենց բերքը և, վերջիվերջո, այնքան չնչին բերք են տալիս, վոր այլ ևս վոչ մի նպատակ չի լինում դրանց մշակելու, վրան չարջարվելու:



60762-67

Յե՞րբ են հողերը հոգևում և ի՞նչ պատճառներից:

Ամեն մի ցանած բույս, սնվելով հողի վորոչ խորության մեջ, սնվում է այն նյութով, վոր նա գտնում է հողի մեջ: Յեվ այսպես, յերբ միևնույն բույսը մի քանի տարիներ նույն տեղից ծծում է այդ նյութերը, բնական է, վոր հողն աղքատանում է այդ նյութերով:

Դա միևնույն է, յեթե մենք ունենայինք մի դրամարկղ, և ամեն տարի նրանից դրամ վերցնեյինք — առանց նոր դրամ նրա մեջը դրելու: Պարզ է, վոր այդ դրամարկղը տարեց-տարի կաղքատանար և վերջիվերջո — կբառարկվեր: Այդպես է և հողը. նրա միջի աղերն ու նյութերն այն դրամներն են, վոր մենք, ցանելով այս կամ այն բույսը, սրանց արմատների միջոցով հանում ենք հողից և զարձնում ենք հատիկներ, ծղոն, պտուղներ, յուղեր և այլն, և հասածի տեղ նորը չենք լցնում, չենք դնում:

Պարզ է, վոր մեր հողային դրամարկղի միջի հարստությունը դրանով կպակասի և վերջիվերջո բոլորովին կսպառվի:

Ուրեմն, յեթե մենք ամեն տարի հողից նրա նյութերն ու աղերը տանում ենք — պետք է և վերադարձնենք և տարածների տեղը դնենք նոր աղեր, նոր նյութեր, նորից նրա միջից դուրս տանելու համար:

Յեթե մենք այդպես անենք — այն է համաժ նյութերը վտխարինենք նոր նյութերով, մեր հողը վոչ միայն չի աղքատանա, բերքը չի պակասի, այլ ընդհակառակը — ցանած բույսի բերքատվությունը կավելանա: Իսկ մենք, ինչպես արդեն ստացինք, դրա հակառակն ենք անում. ամեն տարի նույն հողի մեջ նույն բույսը ցանելով, մենք վատ տնտեսի պես միայն թալանում, գուլում ենք հողի մեջ գտնված մեր հարստությունը: Դրանից էլ առաջանում է հողի հոգևածությունը, նրա, ինչպես մեզանում ընդունված է ասել «բեզարելը» — հոգնելը և, վորպես դրա հետևանք, բերքի տարեց-տարի ընկնելը:

Սա մեկ պատճառը:

Դանք մյուսներին: Յերկրորդ պատճառը, թե ի՞նչու մեր զարնանացան ցորենները համեմատաբար քիչ բերք են տալիս, դա հետևանք է հողի վատ մշակելուն:

Մենք գիտենք, վոր վերև հիշած հողերի միջի հարստությունը վորը մատչելի յե բույսերին, գտնվում է հողի մեջ, նրա վերին 6—7

վերջով հաստուցթյամբ շերտում : Պարզ և , յեթե մենք մեր գործիքներով մշակում ենք միայն այդ հողի ամենավերին 2 — 3 վերջով հաստուցթյան շերտը , դրանով շուտ ենք նրան հոգնեցնում — թալանում . իսկ յեթե մենք մշակեյինք 5 — 6 վերջով խորը — դրանով մեր ցանած բույսը ավելի մեծ պաշար կունենար , ուրեմն և հողը ուշ կհոգներ :

Ահա այդ և , վոր մենք չենք անում :

Գարնանացան շրջաններում հողի մշակության մեր ամենից ընդունված գործիքը — դա չուքն և . իսկ չուքն , ինչպես գիտենք , քանդընդում և հողի միայն վերին 2 — 3 վերջով հաստուցթյամբ շերտը , իսկ դրա տակի հողը մնում և չմշակված , չխորված , ուստի մեր ցանած ցորենը իր սնունդը ստանում և միայն այդ վերին շերտից , այն ինչ , յեթե մենք վարն անեյինք խորը վերցնող գուքաններով — նա կխաններ , շուտ կտար , կիսաիկացներ վոչ թե 2 — 3 վերջով , այլ 5 — 6 վերջով , և մեր ցանած բույսը իր պաշարը կվերցնեք այդ խորությունից , վորով նրա պաշարը կլինեք մեծ և ստացվող բերքն էլ , պարզ և , կլինեք մեծ : Յերրորդ պատճառը ցորենի ցած բերքի — դա վատորակ , չմաքրած սերմացուն և :

Բոլորին հայտնի յե , վոր միայն մաքուր , թարմ , ծանր կշուող սերմն և , վոր տալիս և առողջ բույս , իսկ առողջ բույսից էլ ստացվում և ապահով բերք :

Չնայած վոր այս բանը գիտի ամեն մի գյուղացի , սակայն լավ սերմացուի մասին նա շատ էլ հոգ չի տանում : Տրեյերները , վոր հրաշալիորեն մաքրում են սերմացուն ամեն տեսակ անպետք խտնուրդից , շատ տեղերում ընկած են չդորձադրված և բաց յերկնքի տակ , յերբեմն ժանդոտում , փչանում են . այն ինչ ամեն մի տրեյեր կարող եր որվա մեջ մաքրել 300 — 400 փութ սերմացու ցորեն :

Չորրորդ պատճառը գարնանացան ցորենի մեր վատ բերքի — դա ցեղական , մաքրատեսակ սերմացուի բացակայությունն և : Ռուսաստանի փորձնական կայաններն ու դաշտերը ապացուցել են , վոր ամեն մի ցորեն , վորը նույն իսկ զտված և , միևնույն բերքը չի տալիս , վոր միայն ցորենի լավ տեսակներն են , վոր տալիս են մեծ բերք , իսկ նրանց վատ , ստոր տեսակներն , ինչքան և մաքրես ու հողը լավ մշակես — միշտ էլ , համեմատած բարձրորակ սերմերի հետ , տալիս են ավելի քիչ բերք :

Ուրեմն կա ցորենների բերքատու և վոր բերքատու տեսակներ . ահա բերքատու — սերեկցոն կոչված տեսակներն են , վոր պետք և փոխարինեն մեր ունեցած վատ և քիչ բերք տվող տեսակներին :

Կա և մի հինգերորդ պատճառ , վորը պակաս չի ազդում մեր ստացած բերքի սակավության վրա :

Դա ցանքաշրջանն և :

2. ՑԱՆՔՍԱՇՐՋԱՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՅՑՈՒՆԸ .

Նույն փորձնական կայանների ու դաշտերի հարյուրավոր փորձերը ցույց են տվել , վոր բերքի քանակի վրա նշանակութուն ունի այն , թե այս տարի ցանածից առաջ ինչ բույս և ցանված յեղել նույն արտի մեջ : Յեթե ցորենից առաջ այդ արտում ցորեն ու դարի յե յեղել ցանված — այդ դեպքում յերկրորդ կամ յերրորդ տարում ցանած ցորենի բերքը նվազ և լինում , իսկ ընդհակառակը , յեթե այս տարի ցանած ցորենից առաջ նույն հողում , գլիցուք , կարտոֆիլ կամ բազուկ , կամ թե խոտ և ցանված յեղել — դրանից հետո ցանված հացբույսը հեկտարին 15 , 20 , 30 փութ ավելի բերք և տվել :

Յեւ այսպես , ուսումնասիրելով դանադան տեսակ բույսեր ու սրանցից հետո ցանված ցորենի , դարու բերքը , այդ կայաններն ու փորձագաշտերը գտել են թե՛ վոր բույսերից հետո ցորեն պետք և ցանել և թե ցորենից , դարուց հետո արտում վոր բույսերը պետք և ցանել՝ վորպեսզի թե հացահատիկները մեծ բերք տան և թե նրանից հետո կամ նրանցից առաջ ցանվածները :

Ահա ցանքսի այդ յեղանակը՝ յերբ մի բույսին մի շարք տարիներ փոխարինում են մյուս տեսակ բույսերը և դրանից հողը չի հոգնում , այլ , կարծես , մի բույսը ոգնում և մյուս բույսի լավ դարձանաւուն — դա կոչվում և ցանքաշրջան :

Մեզնում կանոնավոր , խելացի ցանքաշրջան գրեթե չկա . այլ , շատ-շատ , անում են այսպես — նույն արտի վրա , յեթե այս տարի ցորեն են ցանում , դալ տարի ցանում են դարի , վորը նույն հացբույսն և , յերրորդ տարին հողը ցել են անում , իսկ հաջորդ տարում էլի ցանում են ցորեն ու դարի և այլն : Յեւ դրանից հողը իսկի յել չի լավանում , այլ , չնայած մի տարվա հանգստին , նա էլի բավարար բերք չի տալիս :

Հայաստանի լեռնային մի քանի շրջաններում յեղել են ցուցադաշտեր, վորոնց վրա գյուղատնտեսները ցանքսաշրջան են մտցրել, և ամեն անգամ ել ցանքսաշրջան մտցրած հողի վրա ցանածներն ավելի մեծ բերք են տվել, քան գյուղացիների արտերում ցանածները, վորովհետև գյուղատնտեսը ցորենից հետո ցորեն կամ գարի չի ցանել նույն հողի վրա, այլ փոխել է—մեկ տարի կարտոֆիլ է ցանել, մյուս տարին՝ ցորեն, յերրորդ տարին՝ վիկ խոտը, չորրորդ տարին՝ միայն վիկից հետո ցորեն է ցանել և, շնորհիվ այդպիսի ցանքսաշրջանի բոլոր տեսակի բույսերից ստացված բերքը ավելի մեծ է յեղել:

Ահա, ուրեմն, այն չորս գլխավոր պնտճառները, վորոնք ցածացնում են դարնան ցորենի մեր բերքը.

Դրանք հետևյալներն են՝

Առաջին — Հողի իրար յետևից ցանելն՝ առանց նրան աղբելու և պարարտացնելու:

Յերկրորդ — Հողի վատ մշակությունը՝ չութ դորձադրելով, փոխանակ գութանների:

Յերրորդ — Չմաքրած, վատ սերմացու ցանելը,

Չորրորդ — Նոր և բարձր վորակի սերմերով ցանելը:

Հինգերորդ — Կանոնավոր ցանքսաշրջան չունենալը:

Յ. ԳԱՐՆԱՆԱՅԱՆ ՑՈՐԵՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՅԵՎ ՇՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գարնան ցորենը, համեմատած դարնան դարու և վարսակի հետ, ավելի տաք կլիմա և ավելի խոնավություն է սիրում: Հայաստանի այն շրջաններում, ուր դարնան ցորենը հաջողությամբ բուսնում է, նրա դարգացումը՝ սկսած ծլելու որից մինչև հասնելը, տևում է 100 — 115 օր: Նա միաժամանակ յենթակա յե քնք պես դարնան, նույնպես և աչնան ցրտահարությանը, և, մանավանդ, շատ զգայուն է նա դեսի յերաշտը: Բավական են 10 — 15 անանձրև օրեր, և այն ել ծաղկումից հետո, և նա սկսում է նվազել, դեղնել ու կուչ գալ — վորի հետևանքով նրա բերքը մի անգամից 20 — 50 տոկոսով պակասում է:

Բացի այդ, դարնան ցորենը սիրում է, վոր հողն ավելի աննդատու լինի, բերքատու և լավ պարարտացված: Նա շատ զգայուն է

նաև մոլախոտերի վերաբերմամբ, վորոնք կարճ միջոցում խեղդում են նրան և ուժասպառ անում:

ա. ԻՆՉՊԵՍ Ե ԲՍՆՈՒՄ ԳԱՐՆԱՆ ՑՈՐԵՆԸ

Յերբ մենք դարնան ցորենը ցանում ենք խոնավ հողում, անցած ընդամենը 3 — 5 օր, նա սկսում է ծլել — յեթե միայն յեղանակները տաք են, իսկ յեթե այդ միջոցին ցրտեր են անում, ծլումը մի քանի օրով ուշանում է: Համենայն դեպս 3 — 4 աստիճանից ցած տաքությունը խիստ վնասում է ծլմանը: Փորձված է, վոր նա ամենից արագ ծլում է, յերբ ողի տաքությունը հավասար է լինում 20 — 25 աստիճանի ըստ Ցելսիի:

Սերմը, հողի մեջ ուռչելուց հետո, տալիս է յերեք սաղմային արմատիկներ, այն ինչ մյուս հացարույսերն ունենում են՝ դարին 5 — 7, տարեկանը 4, կորեկը 1 արմատիկ:

Յերբ նա դուրս է գցել այդ արմատիկները, նոր միայն առաջանում է նրա ցողոտկը, վորը մինչև հողին հասնելը, ունենում է կապեր, սրանցից ել դուրս են գալիս տերևները: Նորմալ պայմաններում ցանքսի որից մինչև նրա ծլելի հողից դուրս գալը տևում է մոտ 13 օր:

Հետաքրքիր է այստեղ նկատել, վոր աչնան և դարնան ցորենների արձակած առաջին տերևը տարբեր են լինում. մինչդեռ դարնանցան ցորենների այդ տերևը մուգ-կանաչավուն է և բրդոտ, աչնան ցորենի այդ տերևի վրա բրդոտություն չկա, իսկ գույնը դժբուխտա-կանաչագույն է լինում:

Այս առաջին կանաչ տերևի յերևալուց հետո, մի առ ժամանակ ցորենի գլխավոր ցողունը դադարում է այլևս բոյ քչելուց և հետզհետե կուտակվող սննդանյութերը առաջ են բերում մի կողմից ճյուղավորվելու հատկություն, իսկ հետո առաջանում են յերկրորդ կարգի՝ բուսող արմատները — վորոնք փոխարինում են առաջին — սաղմային արմատներին:

Ցորենի ճյուղավորումը առաջանում է նրա հողի տակ գտնված նրա այն կապից, վորն ամենից մոտ է հողի յերեսին: Կապի ինչքան խոր լինելը կախված է ցանքսի խորությունից. ըստ վորում, վորքան խորն է ցանված յեղել հատիկը, այնքան խորն է գտնվում ճյուղավորման կապը:

Արմատները փունջը, սկսելով դարգանալ այս կապից ցած-
փուլում և ամբանում և հողի վարած շերտի մեջ: Պետք է այստեղ
նիշենք, վոր յերկրորդ հերթին դուրս յեկող մշտական արմատների
իր ժամանակին առաջանալն—ահալին նշանակութուն ունի դար-
նան ցորենի հետագա դարգացման համար:

Ահա թե ինչու դարնան ցորենի համար շատ կարևոր է, յերբ
մենք ամբարում ենք հողի մեջ անհրաժեշտ խոնավութուն, իր ժա-
մանակին մշակում ենք հողը, ցանում ենք հողը, և ստեղծում ենք
այնպիսի պայմաններ վորպեսզի ցորենը ճյուղավորվի և, առանց
ուշացնելու, առաջացնի ու զարգացնի ուժեղ արմատներ:

բ. ՅՈՂՈՒՆԻ ԱՌԱՋԱՆԱԼԸ, ԾԱՂԿՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՄՆԵԼԸ

Ցորենի ցողունը, ինչպես և նրա հասկը, առաջանում է ճյուղա-
վորման շրջանում, սակայն ցողունների հակառակ քշելն ու հաս-
կեր տալը տեղի յե ունենում ավելի ուշ, յերբ բույսը մի առժամա-
նակ հանգստի յե մասնում իրեն:

Հասկավորման և հասկեր զցելու շրջանները շատ մեծ նշանա-
կութուն ունեն դարնան ցորենի համար: Ինչպես ասվեց արդեն,
յեթե այդ շրջանում յերաշտ և լինում և կամ հողի մեջ անհրաժեշտ
խոնավութուն և ղզացվում, զբանով բերքը զգալիորեն պակա-
սում է: Ցորենը սկսում է ծաղկել հենց վոր հասկակալում է: Ցո-
րենի բեղմնավորումը տեղի յե ունենում հենց իր մեջ — նա ինքնա-
բեղմնավորվող բույսերին և պատկանում: Բեղմնավորումից հետո
սկսվում է նրա հատիկի զարգացումը, ապա սկսում է նա հասնել:

Ցորենի հասունության միջոցին հետեյալ յերեք շրջաններն
ենք իրարից տարբերում.

1. Մածուկանման հասունություն—յերբ նրա հատիկները դեռ
ևս կանաչ են և հույ տալուս կաթնանման հյութ է դուրս գալիս:
2. Գեղին կամ մումանման հասունություն—յերբ բույսը հա-
մահավասար ղեղին դուրս ունի, իսկ հատիկի մեջը՝ մոմի նման
յեղունգով կարելի յե լինում կիսել:
3. Լրիվ հասունության ժամանակ նրա միջի ջուրը ցամաքում
է, նա ամբանում է, ծավալը փոքրանում է, և դրա պատճառով էլ
նրան շրջապատող բարակ շապիկը հեշտ պոկվում է հատիկից:

Նայած թե ցորենն իր հասունության վո՞ր շրջանումն է, նրա
միջի ջրի քանակը պակասում է այս աղյուսակով:

Յեթե նա գտնվում է հասունության մեջ

Ջուրը՝ ըստ տոկոսներով

Մածուկանման	49,6
Գեղին կամ մումանման	25,7
Լրիվ	12,9

Հատիկի կազմը, ըստ ցորենի տեսակի և նրա բուսնելու շըր-
ջանի, տարբեր է լինում: Ընդհանրապես փորձված է, վոր մեր ցո-
րենները, ինչպես նաև Ռուսաստանի ցորենները, սպիտակուցով
ավելի հարուստ են, քան յեվրոպական ցորենները: Որինակ. Գեր-
մանիայի և Ֆրանսիայի ցորեններն ունեն 12% սպիտակուց, այն
ինչ Ռուսաստանի ամուր, լավ տեսակի ցորենների մեջ սպիտակուցի
տոկոսը հասնում է 21-ի, հետևապես մեր ցորենները սպիտակուցի
կողմից 2 անգամ զերազանցում են Գերմանիայի և Ֆրանսիայի ցո-
րեններին և հավասար են այդ յերկրների հուշագային (լորի, սի-
սեո) հատիկներին, և ավելի սպիտակուց ունեն, քան տավարի մի-
սը, վորի մեջ սպիտակուցը 20 տոկոս է միայն:

Գարնան ցորենները համար լավագույն հողերը հանդիսանում
են նրանք, վորոնք խամ են և կամ յերկար ժամանակ հանգստացած
են յեղել: Այդպիսի հողերի մեջ մեծ քանակությամբ սննդատու
նյութերի պաշար է լինում ամբարված:

4. ԽՈՊԱՆ ՅԵՎ ՀԱՆԳՍԱՑԱԾ ՀՈՂԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գարնան ցորենների ամուր տեսակները, յերբ ցանել են վարած
խոպան հողերի վրա, ավելի մեծ բերք են տվել, քան այն ցորեն-
ները, վորոնք ցանված են յեղել միշտ սև ցելերի մեջ:

Այդպիսի հողերը, յեթե նրանք ջրվում են, գրեթե միշտ էլ
ապահով բերք են տալիս նույնիսկ քարքարոտ հողերում, իսկ յեթե
ցանվում են մեր լեռնային խոնավ հողերում — նրանք յերաշտից
չեն վախենում և բերքը, նույնիսկ շատ չոգ տարիներին, լինում է
մեկից 6—8. ինչպես դա Շիրակումն եր սրանից 50—60 տարի
առաջ: Ներկայումս Շիրակի հողերը, տանյակ տարիներ իրար
յետևից ցորեն ցանելով, այլ ևս այնքան են հոգնել, ուժասպառ յե-
ղել, վոր տաս օրվա յերաշտին նրանք չեն դիմանում: Ահա թե ին-

չու միայն Շիրակի ջրանցքով փոռոգելով և, վոր հնար և լինում ապահովել այդ հողերի վրա դարնան ցորենի մեկին—5 — 6 բերքը, այն ինչ աչնան «Ուկրաինկա» տեսակը նույն հողերում տալիս և հեկտարից 100 — 120 փութ բերք—մի բան, վոր շեյին տեսել շիրակեցիները նույնիսկ 70—80 տարի առաջ, յերբ այդ դաշտի բերքը առասպելական ևր թվում :

5. ԲԱԶՄԱՍՅԱ ԽՈՏԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐՆԱՆ ՑՈՐԵՆԻ ՀԱՄԱՐ

Բազմաթիվ փորձերն ապացուցել են, վոր Հայաստանի չոր կլիմայում, նույնիսկ լեռնային շրջաններում դարնան ցորենը լավ դարգանում և մեծ բերք է տալիս, յերբ ցորենից առաջ արտը առվույտ, կորնգան և ցանված յեղել: Այս բույսերը պատկանում են բազմամյա խոտերին: Սրանք իրենց խորը դնացող և լավ ճյուղավորվող արմատներով հողի ստորին շերտերից խոնավություն են ժողովում, իսկ բազմաթիվ խիտ տերեւներով հողի յերեսն այնպիսի սովեր են դցում, վոր մյուս միամյա խոտերն ու մոլախոտերը այլևս չեն կարողանում ապրել դրանց տակ և չքանում են: Մնալով այն հողի վրա մի քանի տարիներ, թափելով արտի մակերեսին իրենց բազմաթիվ տերեւների մի մասը, իսկ հողի ներսում շատացնելով արմատները, սրանք յերբ վերջիվերջն վարվում են ցորեն տալու համար — դառնում են ցորենի լավագույն նախորդը: Բացի դա այդ տեսակ բույսերը, վոր պատկանում են լոբանման բույսերին, հողը հարստացնում են աղոտով — այսինքն այն տարրով, վորի մեծ պահանջ ունի ցորենը: Յեվ ահա, շնորհիվ վերև հիշած հատկությունների, ցորեն ցանած արտը և հարուստ է լինում սրննոյանութներով և՛ թե հողի կազմը մինչ այն աստիճան լավանում է, վոր դրանից հետո յերկու-յերեք տարի իրարու յետեից ցանվող ցորենը տալիս և ամենարարձր բերք — վորը հասնում է հեկտարին 80 — 90 և ավելի փթի:

Լեռնային չոր շրջաններից պետք է համարել Հայաստանում Ախտայի, Նոր-Բայազետի, Մարտունու, Աբարանի, Բաշ-Գյառնու, Գուզքենդի շրջանները, ուր, թե կորնգանը և թե անջրդի ու ջրվող առվույտը (յոնջա) տալիս է խոտի բարձր բերք, վորից հետո արդեն դարնան ցորենը յերկու տարի միմիանց յետեից ապահովում է այդ շրջաններում հազվագյուտ ցորենի բերք:

Նույն առվույտը, վորպես դարնան ցորենի նախորդ, սակայն անջրդի, հաջող բանում է թե Լոռու և թե Շամաղիին լեռնային մասերում, ուր դարնան խոնավությունը և հաճախակի անձրևները թույլ են տալիս առվույտի մշակությունը՝ իսկ նրանից հետո՝ ապահովում են դարնան ցորենի բերքը:

6. ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես բոլոր դարնանացան բույսերի, դրանց թվում և դարնանացան ցորենի համար հատկացրած հողի մշակությունը սկսելու յե նախորդ տարվա ամառվանից՝ հենց վոր արտի վրայի բերքը ժողովվեց: Իսկ արտը պետք է վարել բազմախոտի գութաններով շատ սաղը՝ 8 — 10 սանտիմետր, միայն թե առանց հողը շուռ տալու: Իսկ վորպեսզի հողը շուռ տրվի, գութանի կրծքի պողպատը հանում են, թողնելով վրան խոփն ու թուրը: Այսպես կատարված վարի շնորհիվ հողի վրա բուսած նախորդ բույսի մնացորդները հողի տակ չեն մնում, այլ պոկվելով, մնում են հողի յերեսին և սրան ծածկում են իրենցով և փուխրացրած հողի բարակ շերտով:

Այսպիսի վարն այն առավելությունն ունի, վոր նա, ծածկելով արտի վերին յերեսը հողով և բույսերի մնացորդներով, պաշտպանում է հողը շորանալուց, սրա տակ ժողովվում է փոնավություն և, մի ամսից հետո, բուսական մասերը կիսափթման վիճակում են գտնվում, վորով և ավելանում է հողի մեջ ապագայում ցանվելիք բույսի սնունդը:

Այսպես վարած արտը մնում է մինչև սեպտեմբեր: Այժմ արդեն պետք է նրա իսկական վարն անել 18 — 20 սանտիմետր խորությամբ այնպիսի գութաններով, վորոնք հողը չեն շուռ տալիս, այլ վարած շերտերը կանգնեցնում են կողքի վրա և միաժամանակ բացում են խորը աղոտներ: Այս վարը կոչվում է աշնան ցել: Աշնան ցելի նպատակն է՝ ժողովել արտի մեջ աչնան անձրևների ջրերը, ձմրան ձյան ջրերը, տանել նրան խորը՝ հողի ներքին շերտի մեջ և այստեղ ամբարել նրան, դարնան ցանվելիք ցորենի համար:

Վաղ դարնանը, հենց վոր վարած այս հողը այնքան ցամաքեց, վոր կարելի յե լինում անասունները գցել մեջը կամ տրակտոր բանացնելը, արտը փոցխում են «գիզագ» կամ տեսակավոր փոցխերով և յերեսը հավասարեցնում ու նախապատրաստում ցանքսի համար:

Հողը այս ձևով մշակելիս մենք թե ամառվա, թե աշնան և թե ձմեռվա խոնավությունն ու ջրերը ժողովում ենք հողի մեջ և պահում նրան վորպես պաշար գարնանացան ցորենի համար: Հողի այս կերպ մշակելը լավ է հատկապես չոր, պինդ, կավային հողերում և չոր սևահողերում, այն ինչ ավազային հողերի վրա սա աշնպիսի աղդեցություն չի ունենում: Մանավանդ պետք է զգուշ լինել այդպես մշակել շատ խոնավ, ճահճային հողերը — վորոնք առանց այդ էլ ունեն իրենց մեջ ավելորդ ջրեր, վորը պետք է խոր առուներ բացելով հեռացնել հողի միջից:

7. ՑԱՆՔՍԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Բույսերի մշակութայն խնդրում այս կամ այն կուլտուրայի ցանքսի ճիշտ ժամկետն ընտրելը և ցանքսը այդ ժամանակին կատարելը բերքատվության տեսակետից ահազին նշանակութուն ունի: Վորպես ղեկավար կանոններ պետք է ընդունել հետևյալները՝

- ա. Վորքան շրջանի դարունը ցամաքային է, քիչ խոնավ և քիչ անձրևներով — այնքան շուտ պետք է սկսել ցանքսը.
- բ. Վորքան հողը խոնավ է, որերն անձրևներով առատ են և յեղանակը ցուրտ — այնքան կարելի յե ուշացնել ցանքսը:
- գ. Ավազային հողերում — ցանքսը սկսելու յե շուտ,
- դ. Կավային ցուրտ հողերում՝ ուշ.
- յե. Սևահողերում վորքան շուտ արվի ցանքսը, այնքան բերքը վստահելի յե և մեծ:

Թե ի՞նչ նշանակութուն ունի վաղ կամ ուշ արած ցորենի գարնան ցանքսը բերքատվության վրա — դա յերևում է, ի միջի այլոց, Ռոստովի և Ստավրոպոլի վորձակայանների հետևյալ տվյալներից. մի հեկտարից բերքը ցենտներնրով ստացվել է.

Ցանքսի ժամանակը	Ռոստովի կայան	Ստավրոպոլի կայան
Վաղ արած ցանքսից	9,5	22
Միջին ժամկետում արած	6,5	8,5
Ուշ արած ցանքսից	5	6,5

Այս մի քանի թվերը ցույց են տալիս, վոր բոլոր դեպքերում էլ շուտ արած ցանքսը ավելի բարձր բերք է տվել, իսկ ուշ արածները՝ շատ քիչ բերք են տվել և վոր Ստավրոպոլի նման չոր կլիմայով շրջանում շուտ արած ցանքսից ստացվող բերքը ուշ արածի դիմաց 300% —ից բարձր է, իսկ Ռոստովում՝ յերկու անգամ: Հաստատում ալդպիսի չոր շրջաններ են գարնանացան ցորենի նկատմամբ՝ Թալինի, Յեղվարդի, Կոտայքի, Բաշ-Գառնիի լեռնային շրջանները, նույնպես Վեդիի, Քեչիչ-Քյանդի, Գնդեաղի շրջանները: Այդ տեղերում, ուր դարունը կարճատև է, անձրևները սակավ — գարնան ցորեն ցանելիս, ցանքսը պետք է կատարել հենց վոր հողն այնքան ցամաքեց, վոր հնար է լինում՝ դաշտը դուրս գալու և աշխատանքները սկսելու: Դա ընկնում է ապրիլի մեջ համենայն դեպս մայիսի 1-ից վոչ ուշ: Ուշ ցանածի բերքը միշտ էլ այդ շրջաններում տալիս է զգալի չափով քիչ բերք և ընդհակառակը:

Վաղ արած ցանքսից ստացվող մեծ բերքը բացատրվելու յե նրանով, վոր շուտ ծլելով, ցորենի ցողունի ստորին մասում յեղած կապերը շուտ էլ թփակալում են, և վորովհետև այս թփակալումը կատարվում է այն ժամանակ, յերբ դեռ ևս հողը խոնավ է, ուստի հենց ինքը թփակալումը առաջ է դնում ուժեղ կերպով, բույսից առաջանում են մի շարք նոր ցողուններ, վորոնք և տալիս են նոր հասկեր և դրանով ապահովում են ցորենի մեծ բերքատվությունը:

Այն ինչ ուշ ցանածը հանդիպում է նրան գլխովին հակառակ և վատ պայմաններին. հողը այդ ժամանակ ցամաքած է լինում — մանավանդ նրա վերին այն շերտում, ուր տեղի յե ունենում ցորենի թփակալումը, և բույսը, չստանալով հողից իրեն անհրաժեշտ խոնավություն, չի կարողանում նոր թփեր ու ցողուններ առաջացնել, տալիս է մի կամ յերկու նվազ հասկեր — վորոնցից և ստացվում է չնչին բերք:

Գարնանացան ցորենի այս հատկությունը, մանավանդ, պետք է լավ հասկանան մեր կուլտուրներն, և ամեն միջոց ձեռք առնեն վարն իր ժամանակին պատրաստելու, սերմացուն ընտրել տալու և ախտահանելու համար, վորպեսզի կարողանան գարնանը շուտ, որերը քիչ-չատ տաքանալուց հետո, սկսեն գարնանացանը:

Յեթե պատահեն դեպքեր, յերբ կոլխոզը դեռ ժամանակ չի ունեցել գարնանացանի համար հատկացրած իր հողերը լավ մշակելու:

լու, այդ դեպքում ավելի լավ ցանքսը չուշացնել մինչև վոր հո-
դերը պատրաստ կլինեն, այլ սկսեն ցանքսը շուտ, քան թե կորց-
նեն մի քանի որ, լավ հիշելով, վոր չորային շրջաններում մի յեր-
կու որվա ուշացումը բացասաբար է անդրադառնում ապագա
բերքի վրա:

8. Ի՞նչ ԽՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՊԵՏՔ Ե ՑԱՆԵԼ

Սերմերի հողում գանված ամենացանկալի խորությունն այն
է, յերբ նրանք այնտեղ գտնվում են շուտ ծլելու, թփակալելու և
արմատավորվելու ամենից լավ պայմաններում, վորոնցից և կախ-
ված է ցորենի հետագա լավ զարգացումը, հասկավորումն ու
մեծ բերքը:

Դրա համար ել ցորենի թե շատ ցանելը, ինչպես նաև շատ
յերեսահան արած ցանքսը փաստակար է: Առաջին դեպքում — յերբ
նա շատ խոր է ցանված, ցորենը չի կարողանում կարճ միջոցում
իր ծիրը դցել, և նա իր ամբողջ ուժը գործ է դնում հողի մեծ չեզո
ճղելու և նրա միջից դուրս գալու վրա, վորով և նա ուժասպառ է
լինում. իսկ յերբ մենք ցանում ենք շատ յերեսից — այդ դեպքում,
ճիշտ է, նա շուտ է ծլում, սակայն այդ ժամանակ հողի վերին
շերտն արդեն այնքան ցամաքած է լինում, վոր մատաղ բույսը չի
կարողանում սնել թփակալման կետերից դուրս յեկող ցողուննե-
րին, նոր արմատիկներ չի կարողանում առաջացնել, և դրա հե-
տևանքով նա մնում է նվաղ, չթփակալված, և բերքն ել այդպիսի
բույսից բնականաբար քիչ է լինում: Պարզ է, ուրեմն, վոր ալյու-
տեղ մենք ընդունելու յենք միջին ճանապարհը — այն է՝ վոչ շատ
խորը ցանել և վոչ ել շատ յերես:

Սարատովի փորձնական կայանը իր բազմամյա փորձերից յե-
լած, խորհուրդ է տալիս դարնան ցորենը ցանել 4 սանտիմետր խո-
րության մեջ — վորը չորային շրջանների համար լավագույնն է
հենց նրանով, վոր այդ խորության մեջ ընկած սերմը հողում
գտնում է իր առողջ զարգացման համար լավագույն պայ-
մանները:

Ներքև բերած աղյուսակը պարզ պատկեր է տալիս սերմի ինչ
խորությամբ ցանելու և ստացած բերքի մասին մի հեկտարից
ցենտներներով:


Խորություն	Բերքը, ցենտներով
2 սանտիմետր	16,1
4 «	17,3
8 «	14,7
12 «	13,2

Պատկերը պարզ է. ամենից շատ բերք ստացվել է միջին —
չորս սանտիմետր խորը ցանվածից, ամենից վատը՝ խոր — 12
սանտիմետրից. շատ յերես — 2 սանտիմետր խորը ցանածը տվել
է 4 սանտիմետր խորությամբ ցանածից ավելի քիչ բերք:

Իհարկե, ամեն մի հողի վրա յել չի կարելի միևնույն չափով
մոտենալ, ավազային, թեթև հողերում պետք է ցանել խորը՝
6—7 սանտիմետր, կավային պինդ հողերում՝ ավելի յերես,
նույնպես յերես պետք է ցանել սեահողերում և շատ խոնավ հո-
ղերում — ուր ջուրը շատ մոտ է հողի մակերեսին և հողը, վորքան
խորը դնանք, այնքան ցուրտ է:

9. ՑԱՆԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Հացահատիկները ցանելու յեղանակները տարբեր են: Ներկա-
յումս գործադրվում է չաղացանք և շարքացանք — ըստ վորում այս
վերջինը կատարում են դանազան ձևերով — առաջին հաճախակի —
յերբ շարքացան մեքենան հարմարեցնում են այնպես, վոր նրա
ամեն մի խողովակը ցանում է 15—18 սանտիմետր հեռավորու-
թյան վրա: Սա սովորական շարքացանք է: Կա շարքացանքի
մյուս — այսպես կոչված ժապավենաձև յեղանակը: Սա կայանում
է նրանում, վոր ցանող խոփիկներն այնպես են դասավորում, վոր
սրանցից 2—3-ը մոտեցնում են իրար 7—9 սանտիմետր հեռավո-
րության վրա, և ապա թողնում են 36—56 սանտիմետր բաց տեղ
և նորից 2—3 խոփիկներ 7—9-ի վրա և այլն: Այդպիսով ստաց-
վում է ժապավենաձև ցանք — յերկու-յերեք շարք ցանած — հետո
լայն տարածություն առանց ցանելու, հետո նորից յերկու-յերեք
շարք ցանած:



Շարացանք—Սա կատարվում է կամ ձեռքով կամ մեքենայով: Յերկու դեպքում էլ շաղացանքը ունի խոշոր պակասներ. նախ վորքան և ցանոցը հմուտ լինի—դժվար է ստանալ համահավասար ցանում. սերմերը մի տեղ լինա կլինեն, մի այլ տեղ շատ նոսր: յերկրորդ. նրանք կլինեն տարբեր խորության մեջ, ուրեմն և նրանց ծլումը, զարգացումն ու հասնելը կլինի դանդաղան ժամանակներում, և, վերջապես, յերրորդ պակասն այն է, վոր շաղացանքին հեկտարըն գնում է 3—4 փութ ավելի սերմ քան շարքացանը անելիս:

Շարքացանը — շարքացան մեքենաներով—շաղացանի հանդեպ ունի այն առավելությունները, վոր սերմերն այստեղ բնկնում են միևնույն խորության մեջ, միևնույն հեռավորության վրա—ուստի ցանվող բույսի ծլումը և թե հասունանալը տեղի յե ունենում միաժամանակ. բացի դա, ինչպես ասվեց արդեն, շարքացանով գնում է 20—25%—ով ավելի քիչ սերմ, վորը ժողովրդական տնտեսության համար հսկայական խնայողություն է:

Շարքացանի մի ուրիշ կողմնակի ոգուտն էլ այն է, վոր շարքացան անելու համար անհրաժեշտ է հողը նախապես լավ հերկել, փոցխել, հավասարեցնել արտի յերեսը, մաքրել հողը նրա մեջ յեղած կոշտերից, մեծ չոփերից, այրմաններից և այլն, հենց այն պատճառով, վոր վատ մշակած հողի մեջ շարքացան մեքենայի խոփիկները վատ են դործում, անցքերը բռնվում են և դրանից ցանքն էլ կատարվում է վատ:

Ժապավենաձև ցանքը լավ է այն տեղերի համար, ուր հողը շատ մոլախոտեր է բուսցնում, վորոնք և խեղդում են նորարույս ծլին և հենց իրեն բույսին: Ժապավենաձև ցանքն անելիս միջնակները կարելի յե լինում քաղհանել մեքենաներով: Նա մեծ մասամբ դործադրում են բարձր տեսակի սելեկցյոն սերմեր ստանալու համար:

Գալով բերքի քանակին, համատարած շարքացանի և ժապավենաձևի մեջ տարբերությունը շատ չնչին է, հաղելով 5—8%՝ հոգուտ համատարածի:

10. ՑԱՆՔՍԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Թե վորքան խիտ կամ սեհրակ պետք է ցանել—դա կախված է հողի հատկությունից, նրա լավ կամ վատ մշակված, պարար-

տացված թե չպարարտացված լինելուց և, ի հարկե, սերմացուի հատկությունից: Վորպես ընդհանուր կանոն պետք է ղեկավարվենք հետևյալներով.

ա. Վորքան հողը ամուր է և չոր—այնքան շատ սերմ պետք է ցանել, վորքան նա փուխր է ու խոնավ՝ այնքան քիչ: Լավ պարարտացրած և աղքատ հողերում ավելի քիչ սերմ պետք է ցանել, իսկ չպարարտացրած ու աղքատ հողերի մեջ՝ շատ:

Լավորակ սերմացուն ցանում են ավելի քիչ, քան վատ և խառը սերմացուն:

Ուրեմն, աչքի առաջ ունենալով այդ բոլոր պայմանները, պետք է ցանքը կատարել ըստ դրա:

Համենայն դեպս մեզնում—լեռնային շրջաններում ձեռքով ցանելիս, միջակ սերմացու գնում է հեկտարին 12—16 փութ, այն ինչ շարքացանով ցանելիս սերմի քանակը տարբերվում է 7—9 փթի մեջ. միայն շատ աղքատ ու չոր հողերումն է, վոր շարքացանով ցանվում է հեկտարին 10—11 փութ: Սելեկցյոն սերմեր, պարարտացրած և լավ մշակած հողում, ցանում են հեկտարին 6 փութ:

Ահա թե վորքան մե՛ծ է լավ և վատ սերմացուի դործադրություն տարբերությունը միմիայն սերմի քանակի վերաբերմամբ:

Սրանից պետք է հետևեցնենք, վոր բոլոր պայմաններում ավելի ձեռնտու յե հողը լավ մշակել, պարարտացնել և ցանել շարքացան մեքենաներով, քան ձեռքով շաղացան անել:

11. ՍԵՐՄԵՐԻ ՍԵԼԵԿՑԻՈՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս դրույկի մեջ շատ անգամ կրկնվել են «սելեկցյոն սերմեր» խոսքերը:

Վո՞ր սերմերն են կոչվում սելեկցյոն սերմեր և վո՞րոնք են նրանց առավելությունները սովորական սերմերի դիմաց:

Սելեկցյոն—կնշանակի ընտրովի: Այս անվան տակ հայտնի յեն այն սերմերը, վոր առաջ են բերվում զիտական-փորձական հասուկ հաստատությունների կողմից—վորոնք կոչվում են Սելեկցյոն կայաններ: Սելեկցյոն կայանները փորձում են աշխարհիս յերեսի բոլոր այն տեսակ սերմերը, վորոնք համապատասխանում են այս կամ այն յերկրի, նրա շրջանների կլիմայական տարբեր

պայմաններին: Յեւ ահա այդ սերմերից նրանք հետզհետե զտելով, ընտրելով բաղձացնում են զանազան շրջաններ՝ փորձելու և դուրս բերելու այդ տեսակի սերմացու:


Բերքի բարձրացման տեսակետից սերեկցյուն սերմերով ցանքան ունի հսկայական առավելություններ. նախ, վոր սերեկցյուն սեր-



Նկ. 1. Գարնանացան Լյուտեցիս ցորենի տեսակը:

Նկ. 2. Գարնան փափուկ Ալբիդում ցորենի տեսակը: Հարմար և հարավային չոր շրջանների համար:

Մեր կոլխոզները, ըստ հնգամյա պլանի, այս տարի իրենց ցորենի ցանքի տարածության 50%-ը պետք է ցանեն բարձրորակ սերեկցյուն տեսակներով: Ահա ինչու աշխատավոր գյուղացին թե կոլխոզներում և թե անհատական տնտեսություններում պետք է սովորեն կերպ ձգտեն այդ ծրագիրը, վորը մեր տնտեսական վերելքի ծրագիրն է, իրագործեն բոլոր հարյուր տոկոսով:



Նկ. 3. Գարնանացան Եյուրենի Յեղիում տեսակը. բերքատու և դիմացկուն:

Նկ. 4. Կարծր գարնանացան ցորենի «Բեյտուրկա» տեսակը:

Սերեկցյուն սերմացու գործադրելիս անհրաժեշտ է վոր այդ սերմերով ցանի իր հողերը կոլխոզը, գյուղը՝ ամբողջովին — մեծ տարածություններով և միևնույն տեղում, վորովհետև, յեթե սերեկցյուն սերմերով ցանված հողերի մեջտեղը կամ նրանց մոտիկ հարևանության մեջ գտնվեն արտեր, վորոնք ցանված են վոչ սերեկցյուն սերմերով, այդ դեպքում այս արտերը իրենց վատորակ սերմերով փչացնում են բարձրորակ սերմերով ցանած արտերը:

մերը հարմարացված են վորոչ շրջանի պայմաններին, ապա նրանք անմամն ընտրված են լինում, մաքրված, բարձր հատկություն, ծլունակություն են ունենում, հետևապես և բերքատվությունը բարձրացնում են 20, 30, 50 տոկոսով:

Պարզ է, ուրեմն, վոր սերեկցյոն սերմերն աճենից ավելի պետք է դործադրվեն համատարած կոլեկտիվացման շրջաններում, վորպեսզի ցորենի բոլոր դաշտերը ցանված լինեն միևնույն սերմերով ու մշակվեն կատարելագործված յեղանակներով:

Հայաստանում արգեն հիմք է դրված սերեկցյոն սորմնարուծութուն, և այս տարի վորոչ շրջանների կոլտոյներ իրենց դարնանացան ցորենի ցանքսը կանեն այդ սերմերով: Հարկավոր է միայն, վոր սերեկցյոն սերմերի համար հատկացվող հողերը մշակվեն մեծ խնամքով, ցանքսը կատարեն իր ժամանակին և անողաման շարքացան մեքենաներով:

Այդ դեպքում միայն սերեկցյոն սերմերը կտան այն բարձր բերքը, վոր նրանք տալիս են թե սերմնարուծարաններում և թե որինակելի կազմակերպված կոլտոյներում ու խորհրդային տրեմետութուններում:

12. ԳԱՐՆԱՆԱՅԱՆ ՑՈՐԵՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գարնանացան ցորենները լինում են բազմաթիվ տեսակների՝ իրենց յենթատեսակներով և փոփոխակներով: Նրանց միջև համաշխարհային տարածումն ունի իր լավ հատկութուններով Լյուտեսցինս փոփոխակը, վորն անքիտ է, սպիտակ հասակով և կարմիր գույնով — (կարմրահատ):

Անքիտ, սպիտակահատ գարնանացանի լավ տեսակ է Ալբիդում փոփոխակը (Տես նկար 2) Սրա սերմը բաց դեղնագույն է կամ սպիտակ, թափանցիկ — ապակենման. շուտ հասնող է և յեբաշտին դիմացող:

Ալբիդումը տալիս է շատ բարձր տեսակի, քիչ դեղնավուն ալյուր, վորից ստացվում է մեծ քանակով ալեյցուկ՝ նրանից հաց թխելիս:

Փուխր ցորեններից — սա լավագույններից մեկն է — վորը շատ տարածված է Հյուսիսային Կովկասում և Ռուսաստանի սևահող շրջաններում:

Քիտավոր տեսակներից հայտնի յե «Ռուսակ» տեսակը, վորը յերաշտին դիմացող է, դեմի, սպիտակ հասկերով է, և տալիս է գերազանց ալյուր: Սրա բերքատվութունը ճիշտ է, շատ մեծ է:

բայց ունի այն առավելութունը, վոր հասնելիս, հատիկները չեն թափվում: Ցեղիում № 0111. (Տես նկար 3.) Սա գարնանացանի քիտավոր, կարմրահատ տեսակներիցն է: Հատիկները միջին մեծութան են, կարմիր, յերկարուկ, ծանրաքաշ և ապակիանման: Բարձրորակ ալյուր է ստացվում և տալիս է մեծ բերք, շնորհիվ թփակալելու իր առանձին հատկությանը:

Հարավային չոր շրջանների համար Ցեղիում № 0111-ը շատ առաջարկելի տեսակ է, վորն արժեք փորձել Հայաստանի նախալեռնային բարձրադիր, բայց սաք շրջաններում:

Ցորենի կարծր տեսակները — գարնան ցորենի կարծր տեսակներից հայտնի յե իր բարձր արժանավորութուններով «Բելուտուրկա № 0189» (Տես նկար 4.) տեսակը: Սրա հասկը կարճ է, քիտերը փոքր ինչ դեպի կողեր ցցվող, հատիկը ապակիանման է, դեղնագույն: Ալյուր տալու կողմից՝ ցորենի կարծր տեսակների մեջ լավագույններից մեկն է, միաժամանակ ստացվում է և լավորակ հաց:

Կուբակկա № 010. Հատիկները կարմիր, հասկերը կարմիր, յերկար և փուխր: Այս տեսակը Հայաստանում վերջին 4—5 տարիներում բավական տարածված է, բայց նրան ցանելու լուրջ փորձեր չեն յեղել:

Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում բավական տարածված և գնահատելի տեսակներիցն են «Գալգալուր», «Կամչատկան», «Քուիկը» — բոլորն ել լավ հաց տվող, դիմացկուն և խոնավ տարիներին բերքատու տեսակներ են:

Լենինականի և Փամբակի շրջաններում կան ցորենի մի շարք կարմրահատեր, վորոնք բազայն բերքատու չեն, և, չնայած վոր համեզ հաց են տալիս, բայց հացի գույնը մուգ է լինում:

Մեր ցորենների տարբեր տեսակների կլիմայաման պայմանները նոր յեն միայն ուսումնասիրվում: Անշուշտ, Հայաստանը կարող է սալ իր տարբեր կլիմայական պայմաններին ամենից հարմարվող ցորենի գարնանացան տեսակներ: Հայաստանի Սերեկցյոն կայանը այդ գործում մեծ դեր ունի կատարելու մոտ ապագայում:



6 407.

9837

Цена 6
С. X.



Возделывание
яровой пшеницы
сост. А. Атанасян

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр, Никольская, 10.

« Ազգային գրադարան »



NL0289707

18595